Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ
Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան Վարդապետի

.. ... թշնամիքն խաչին զօրացեալք խումբ խումբ շրջեալ, զաշխարհ սոցին ի կողմն գոգօվայու ՃՁ տաճիկս տապաստ արկեր են սրով, և զմնացեալս ի փախուստ դարձուցեալ են։ Աստ այժմ է թանկութիւն, ձիանց խոտ ոչ գտանի, հացն քան զվէնէտիկ թանկ, և խլելով առնեն ի ձեռաց իրերաց. ձուն, երկուքն թրայի մ'է և ոչ գտանի. արդար եղն, 7 թրայի ֆունթն, ձէթն 6. այդ տեղի մէկ ստկի չօխգամն և խնծորն, աստ 4 և 5 ստակ, բայց միսն աժան, այսինքն ֆունթն մէկ թրայի։ Գինին մէկ պօցան 6 և 7 թրայի։ Այս ամենայն ոչ է յաղագս այսր, թէ բազմութիւն զօրաց կամ մարդկանց գոն աստ, զի ի ժամանակս խաղաղութեան, այլ աւելի լեալ են։ Այլ ասեն թէ իշխանք և վերակացուք քաղաքիս վասն ազահութեան իւրեանց և կաշառառութեանց թոյլ տուեալ են այս թանկութեանս ... զօրապետքն սոցին տիւ և գիշեր ի դահվէխանայսն կոյտ ոսկւոյ եդեալ խաղան նարտ, տանին և տարուին, և այլոյ իրի ոչ պարապին։ Դեռ ահա աստ են ոմանք խեղճ և ողորմելի հայք, աստի և անտի մազապուրծ փախստեայք անկեալք աստ. ոմանք յառաջ և ոմանք այժմ, են ուխտաւորք գնալ ի հոօմ, են չգաւորք, մերթ վասն միոյն և մերթ վասն միւսոյն ծանուցումն առնեմ յեկեղեցւոջ։ Ոչ ունին զբնակութիւն, այսպէս և ծերունի ոմն ազքիրմանցի ի ցրտութենէ կալեալ, փունթօ եղեալ, չունելով զտեղի և զապրուստ, թէպէտ զոմանս աւուրս ես դարմանեցի, բայց մեռաւ։ Ուխտաւորաց մինն է մարգուանեցի, սա երկու ամիս յառաջ ելեալ է աստի գնալ ի Հոօմ. զկնի երից և չորից աւուրց ճանապարհի, ասպատակօղք մերկացուցեալ են զինքն, որ իբրու զմ. ոսկի ունեալ իցէ վասն ապրուստի իւրոյ. վերստին դարձեալ այսր, զի աշխատութեամբ գոնեայ շահեսցի ինչ, որով կարիցէ գալ այդր կողմն...։ Մի ևս էմիրէ դարձած նոր քրիստոնեայ մի, մկրտեցեալ ի Բարդողիմէոս Վ.է ի գուայովայ. մի ևս թօխաթցի երիտասարդ մի, տաճկացած ի Սուքիաս Վ.ի քովէն ելեալն, զոր մինաս Վ. եպիսկոպոսն կամեցեալ էր առնուլ մերձ իւր...։ Եւ վասն թաղման հայր յակոբին գնացեալ է 46 ֆիօրին...։ Դեռ լուաք աստ, թէ ի ստամպօլ զթագաւորն փոխեր են. զգալով ինքն, նախապէս փախեալ և թագեալ է, և անյայտացուցեալ զինքն։ Դեռ զի մեծամեծ հոօմ կախեալ են. ի սելանիկ ևս ի տունս մտեալ զգործիք պատերազմի որոնել։...

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Յամի Տեառն 1737ին
դեկտեմբերի 7ին
4 գիր ի Պելրդատ

ԼԶ.

Գլխատուած «ՃԷՆրալ»ը, որ կը յիշատակուի հետագայ և յաջորդ նամակներուն մէջ առանց անուան՝ Տօշադ զօրավարն է։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ մերոյ տեառն տեառն Մխիթարայ
Աստուածաբանութեան Վարդապետի

. . . . ահա նաև ի 20 մարտի հատին աստ զգլուխն նիշու զօրքին տուօղ ՃԷՆրալին, որ ի յայսքան ժամանակ ի քննութեան էր ի բանտի աստ, և վճիռն գլխատման ի կայսերական իշխանութենէն եկն. չորիցս բախմամբ ապա հատեցեալ եղև. ոմանք ասացին